ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ III, № 1, 1950 Биол. и сельхоз. науки

Ռ. Հ. Սողնոյան

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԵՂՐՈՒ ՇՐՋԱՆԻ ԽԱՂՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԸ

Մեղրու շրջանը գտնվում է Հայկական ՍՍՌ հարավ-արևելյան ծայրամասում և ռելիեֆի ու կլիմայական տեսակետից խայտաբղետ է։ Շնորհիվ բարձր (մինչև 3000 մ) լեռների, Մեղրու շրջանում կարելի է գտնել մի շարք զոտիներ, սկսած ալպյանից մինչև կիսաանապատային չոր մերձարևադարձայինը, որտեղ գյուղատնտեսությունը հնարավոր է հիմնականում ոռոգման միջոցով։

Մեղրու շրջանում այգեգործությամբ զբաղվում են Արաքս գետից մինչև 5—8 կմ վրա գտնվող գյուղերում (Մեղրի, Շվանիձոր, Կարճևան, Ալիդարա, Նյուվադի, Կուրիս, Վահրավար, Լեհվազ)։ Կլիմայական պայմաններն այստեղ միանգամայն բարենպաստ են այգեգործության զարգացման համար, բայց անհրաժեշտ հողային տարածության և ոռոգման ջրի սակավությունը (բացառությամբ Մեղրի գյուղից, որտեղ ջուրն առատ է) հնարավորություն չեն տալիս այգիներն ընդարձակելու։ Այգիների ընդհանուր տարածությունն ամբողջ շրջանում մոտ 190 հեկտար է։ Համեմատաբար ավելի շատ այգիներ ունեն Շվանիձորը (24,5 հա), Ալիդարան (23,3 հա) և Կարճևանը (22,7 հա)։ Մնացած գյուղերը միջին հաշվով ունեն 10—15-ական հեկտար։

Մեղրու շրջանի Գյուղբաժնի տվյալներով այգիների միջին բերքատվությունը 1940—1946 թ.թ. հետևյալ պատկերն է ներկայացնում.

| №№ ը. կ. | Գյուղերը | Բերքատվությունը ցենտներներով | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1940 թ. | 1941 թ. | 1942 թ. | 1943 թ. | 1944 թ. | 1945 թ. | 1946 թ. |
| 1 | Նյուվադի | 6 | 40 | 40 | 26 | 4 | 11 | 14 |
| 2 | Շվանիձոր | 32 | 35 | 55 | 51 | 15,5 | 39 | 55 |
| 3 | Ալիդարա | 62 | 61 | 81 | 31 | 59 | 87 | 78 |
| 4 | Մեղրի | 45 | 49 | 58 | 46 | 60,5 | 59 | 71 |
| 5 | Կարճևան | 40 | 46 | 26 | 72 | 21,5 | 18 | 22 |
| 6 | Կուրիս | 71 | 59 | 74 | 47 | 36,5 | 52 | 46 |
| 7 | Վահրավար | 60 | 71 | 33 | 62 | 23 | 60 | 36 |
| 8 | Լեհվազ | 57 | 58 | 52 | 45 | 32 | 42 | 30 |
| 9 | Վարդանաձոր | — | — | — | — | 35 | 47 | 18 |

Այգիներն ըստ սորտային կազմության խայտաբղետ են։ Տարածված սորտերի թվին են պատկանում Արևիկ (Այակուբա), Հաստակեթ (Այրոզան), Ալիդարա (Սպիտակ կախանի), Ծապգի, Տաճանդյուր, Ծտի ձու, Շիրեյի,

Քիշմիշ, Սև Արևիկ (Սև ալդարա), Ճիլ սևաթ, Սև խծաղտուկ, Արարատի (Հաչաբաշ), որին տեղում սխալմամբ անվանում են նաև Թայիֆի, Ամբարի (Շաֆեյի) և այլն։

Այս սորտերն այգիներում լինում են անհատ վազերով, բացառությամբ Արևիկ սորտի, որը շրջանի բոլոր այգիներում կազմում է 95—98%-ը, բացի Ալդարա գյուղից, որտեղ նրա տոկոսը հասնում է 70—75-ի։

Մեղրու շրջանի տեղական խաղողի սորտերի մասին ընդհանուր տեղեկություններ տալիս են Գ. Դ. Ցարուշենկոն և Ն. Ֆ. Գրիգորյանը*։ Տեղական սորտերի նկարագրության ժամանակ նրանք Այրոզան անվան տակ նկարագրել են Մեղրու շրջանում հայտնի ձոաղի** սորտը, իսկ Սև Կուտապ անվան տակ նկարագրել են Այրոզան կամ Հաստակեթ սորտը։ Վերջին սորտի վերաբերյալ նշված է, որ նա շատ տարածված և բերքատու է։ Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրա քանակն այգիներում չի անցնում 2—3%-ից, իսկ բերքատվությունը միջակից քիչ բարձր է. օգտագործվում է գլխավորապես սեղանի սպիտակ գինուն գույն տալու համար։ Նույն աշխատության մեջ Սպիտակ Կախանի անվան տակ նկարագրված է Մեղրու շրջանում հայտնի և Ալդարա գյուղի այգիների 20—25% կազմող Ալդարա սորտը։ Սակայն այս անունը չի բերված նույնիսկ որպես սինոնիմ։ Մեղրու շրջանում գինու հիմնական սորտ է համարվում Արևիկը։ Այդ սորտից են ստացել Մեղրու շրջանի հայտնի դեսերտային և սեղանի թունդ գինիները։ Սակայն նրա մասին Ցարուշենկոն և Գրիգորյանը գրում են, թե նա գինու սորտ է, բայց այդ տեսակետից բարձր որակի չէ։ Այդ տեսակետը միանգամայն չի համապատասխանում իրականությանը, քանի որ Արևիկից ստացվում է բարձր որակի գինի։

Մեղրու շրջանի այգիներում հատ ու կենտ վազերով կարելի է հանդիպել Արարատի սորտին, որը տեղում անվանում են Թայիֆի կամ Դալի տաշի։ Հեղինակներն այս սորտի հետ բավականաչափ ծանոթ չլինելու հետևանքով, հենվելով Թայիֆի անվան վրա, նույնիսկ ենթադրում են, թե նա ծագում է Արաբիայից, կամ շատ մոտ է Միջին Ասիայի Ակթայիֆի սորտին։ Նույն հեղինակները տերևներն ըստ թավոտության խմբավորելիս Արևիկը դասել են «երեսի կողմից լերկ, տակի կողմից ջղերի վրա սատայնանման թավ, իսկ միջջղային տարածությունը ծածկված թույլ խոզամազերով» խմբին, մինչդեռ մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արևիկի տերևները թե՛ երեսի և թե՛ տակի կողմից միանգամայն լերկ են։

Շնորհիվ լեռնաշղթաների պաշտպանության, Մեղրու շրջանում ձմռան ջերմաստիճանի խիստ անկում տեղի չի ունենում, որը հնարավորություն է տալիս այգիները չթաղել։ Այգիները վաղ գարնանային ցրտահարությունից պաշտպանելու համար շրջանում ընդունված է հետևյալ ձևավորման սիստեմը՝ բարձրաբուն, 8—12 աչք ունեցող 2—3 մատ, որոնք հետագայում աղեղնաձև թեքելով կապում են բնից։ Բնի բարձրությունը միջին հաշվով հավասար է մեկ մետրի։ Բունը կապում են 3—4 սմ տրամագիծ ունեցող հենարաններից։ Որպեսզի վաղ գարնան ցրտահարությունից

* Գ. Դ. Ցարուշենկո և Ն. Ֆ. Գրիգորյան—Սուբտրոպիկական Մեղրի։ Երևան, 1941։

** ձոաղի— ձրս և աղի (պոչավոր խաղող) բառերի միացումն է։ Այդ անունն ինքնաբերաբար բնորոշում է տվյալ սորտը, որի ողկույզների երկարությունը հասնում է 40—70 սմ։

այգիները պաշտպանվեն, էտից հետո մատերը չեն կոտրում և կապում բնին, իսկ երբ նրա շիվերը հասնում են 25—30 սմ, շնորհիվ շիվերի ծանրության մատերն աստիճանաբար թեքվում են դեպի ցած. հենց այդ ժամանակից սկսում են մատերի կապելը բնից: Այգիների հողը թեթև ավազային, երբեմն մանր խճով հարուստ, կամ կավա-ավազային է, հումուսով համեմատաբար աղքատ, որի հետևանքով առնվազն երեք տարին մեկ անգամ այգիները պարարտացվում են գոմաղբով: Ձմեռը այգիների հողը մեծ մասամբ չի սառչում, որի շնորհիվ այգեփորը հիմնականում կատարվում է ձմռան ամիսներին կամ վաղ գարնանը: Շնորհիվ ռելեֆի և նախկինում գոյություն ունեցող մասնավոր հողատիրության, այգիները տնկվել են փոքր կտորներով (հաճախ 0,1—0,3 հեկտար), տարբեր խտության և ուղղության ունեցող շարքերով: Այգիների խտությունը տատանվում է՝ շարքը շարքից 1—1,5 մ և վազը վազից 1—1,25 մ հեռավորության սահմաններում:

Այգիների առաջին ոռոգումը սովորաբար կատարվում է այգեփորից առաջ: Եթե այգիները փորվում են ձմռան ամիսներին, ապա փորից առաջ չեն ոռոգում: Երկրորդ ոռոգումը կատարվում է ծաղկումից առաջ (եթե այգիները գարնան կամ ձմռան ամիսներին փորված են). երրորդը՝ պտուղները կազմակերպվելուց հետո: Հետագա ոռոգումները կատարվում են, ըստ ջրի առկայության, ամիսը 2—3 անգամ: Այն գյուղերում, որտեղ ջրի մեծ պակասություն է զգացվում (Վարձևան, Շվանիձոր) այգիներն ամբողջ տարվա ընթացքում ջրվում են երկու կամ երեք անգամ՝ 1—2 անգամ ամառը, 1 անգամ ձմռանը:

Ամառվա ընթացքում այգիները մեծ մասամբ քաղհանվում են 1—2 անգամ. քաղհանը, շնորհիվ հողի փխրության՝ կատարվում է ձեռքով: Քաղհանած խոտը փռում-չորացնում են թմբերի վրա, հետագայում հավաքելու համար: Մատերը բնին կապելու ընթացքում կատարվում է շվառումը, իսկ բերքի լրիվ հասունացման շրջանում հաճախ հեռացնում են ծայրի շիվերի ողկույզներից վերև գտնվող մասը:

Հիվանդություններից զգալի չափով տարածված են միլդյուն և օիդիումը, իսկ վնասատուներից՝ պալխրագիր և խաղողի վահանակիրը (виноградный червец): Վերջինս ոչ ամեն տարի է, որ համեմատաբար ուժեղ է բազմանում:

## ԽԱՂՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա Ր Ե Վ Ի Կ[1]

Արևիկը Հայկական ՍՍՌ-ում համարվում է աբորիգեն սորտ և մինչև այժմ հայտնի է եղել Ալյագուրա անունով: Հայաստանում հիմնականում տարածված է Մեղրու շրջանում. կա նաև Ղափանի շրջանում և մոտ 10 հեկտար՝ Ալիգարա անվան տակ մշակվում է «Արարատ» տրեստի Միկոյանի անվան սովխոզում, իսկ առանձին վազեր՝ նաև Արտաշատի այգիներում: Արևիկը մեկն է հիմնական ստանդարտային սորտիմենտի մեջ Մեղրու շրջանի համար:

[1] Արևիկի ավելի համառոտ նկարագրությունը մենք տվել ենք 1947 թ. հրատարակված «Ամպելոգրաֆիա» գրքում: Ներկա նկարագրությունը լրացված է հետագա ուսումնասիրություններով:

Տ ե ր և ը կլորավուն է, հինգբլթականի, երբեմն եռաբլթակ կամ ամբողջական, 16,2 (12,1—18,0) սմ երկարությամբ, 16,3 (13,3—18,8) սմ լայնությամբ, երեսի կողմից լերկ, մուգ կանաչ, հարթ. տակի կողմից կա-



Նկար 1. Արենի

նաչ, լերկ: Վերին կտրվածքները՝ ծանծաղ կամ բացակա, մեծ մասամբ փակ, առանց լուսանցքի կամ ճեղքանման լուսանցքով. կոթունային կտրվածքը բաց քնարաձևից մինչև U-աձև, սուր հատակով: Գլխավոր ջղերն իրենց եզման կետում ներկված թույլ գինեկարմիր գույնով:

Ծ ա ղ ի կ ը ֆունկցիոնալ իգական է. վարսանդը սափորաձև, առէջքները 4—6 հատ, մեծ մասամբ 5, կարճացած զսպի՞ղված:

*Ողկույզը լայն կոնաձև կամ [illegible] է, հիմնականում նոսր, լավ փոշոտման դեպքում՝ խիտ։ Ազատ փոշոտման դեպքում՝ 17,0 (9,4—27,3) սմ երկարությամբ, 9,5 (3,0—25,6) սմ լայնությամբ, 194 (25—782) գր կշռով։ Լրացուցիչ փոշոտման դեպքում՝ 19,0 (9,5—25,2) սմ երկարությամբ, 12,3 (6,7—17,6) սմ լայնությամբ, 372 (40—1433) գր կշռով։*

*Պտուղը կլորավուն է, խոշոր, 1,87 (1,35—2,1) սմ երկարությամբ, 1,83 (1,35—2,1) սմ լայնությամբ։ 100 պտղի կշիռը՝ 414 գր, իսկ ծավալը՝ 364 սմ³։ Գույնը ստվերում՝ կանաչ դեղնավուն է, արևի տակ՝ վառ դեղնականաչավուն, պտղամիսը հյութալի, մսալի, բավականին քաղցր (այրող) համով, մաշկը հաստ և կոպիտ, ծածկված բարակ մոմաշերտով, հեշտությամբ պտղամսից անջատվող, հյութն անգույն։ Սերմերը 1—4, հաճախ 1—2 հատ։ 100 սերմի կշիռը՝ 4,09 գր։*

## Ագրո-բիոլոգիական հատկությունները

*Ծաղկման սկիզբը՝ 1945 թվին—3/VI, 1947 թ.—28/V։*

*Արևիկն ուշահաս սորտ է. նրա հասունացման սկիզբը Մեղրու պայմաններում ընկնում է օգոստոսի առաջին կեսին, իսկ լրիվ հասունացումը՝ —սեպտեմբերի առաջին կեսին։ Բավականին փարթամ է։ Բերքատվությունը կախված է փոշոտման հաջողությունից։ Լավ փոշոտման դեպքում տալիս է բարձր բերք։ Ազատ փոշոտված մեկ վազի բերքատվությունը 1947 թ. տվյալներով տատանվում է 1,105 կգ-ից մինչև 4,733 կգ, միջինը՝ 3.02 կգ։ Լրացուցիչ փոշոտում ստացած մեկ վազի բերքատվությունը տատանվում է 3,448—14,616 կգ, միջինը՝ 7,027 կգ։ Տնկարկի խտությունը 1,5×1,25 մ։*

*Մեղրու շրջանում կատարված երեք տարվա դիտողությունները ցույց են տվել, որ Արևիկը բավականին ուժեղ է վարակվում թե միլդիուով և թե օիդիումով։*

## Տնտեսական-տեխնոլոգիական հատկությունները

*Խաղողի մեխանիկական կազմությունը բնութագրելու համար ստորև բերում ենք 1947 թ. կատարած 11 ազատ փոշոտված և 13 լրացուցիչ փոշոտում ստացած ողկույզների մեխանիկական անալիզի միջին տվյալները։*

| | Ազատ փոշոտված | Լրացուցիչ փոշոտված |
|---|---|---|
| Ողկույզի կշիռը . . . . . . . . | 230 գր | 494 գր |
| Ողկույզի պտուղների թիվը . . | 59 հատ | 120 հատ |
| Ողկույզի պտուղների կշիռը . . | 226,3 գր | 487,2 գր |
| Մեկ պտղի կշիռը . . . . . . | 3,83 գր | 4,07 գր |
| Պտուղների ծավալը . . . . . | 214,1 սմ³ | 428,0 սմ³ |
| Մեկ պտղի ծավալը . . . . . . | 3,62 սմ³ | 3,65 սմ³ |
| Չանչի կշիռը . . . . . . . . | 3,63 գր | 6,77 գր |
| Ողկույզի մաշկի կշիռը . . . . | 9,25 գր | 16,36 գր |
| Ողկույզի սերմերի կշիռը . . . | 3,99 գր | 8,72 գր |
| Հյութի և պտղամսի կշիռը . . | 213,13 գր | 462,13 գր |

*Հյութի քիմիական կազմությունը 1947 թ. սեպտեմբերի 1-ին հետա-*

վյալն է եղել. այսպես փոշոտման դեպքում շաքարը՝ 21%, ընդհանուր թթվայնությունը 5,47‰, լրացուցիչ փոշոտման դեպքում շաքարը՝ 18,7%, թթվայնությունը 4,95‰.

Արևիկը հիմնականում գործ է ածվում սեղանի թունդ և քաղցրավուն գինիներ ստանալու համար։ Արևիկից պատրաստվում է նաև չամիչ։

## ՀԱՍՏԱԿՈԹ

Հաստակոթը համարվում է Հայկական ՍՍՌ-ում տարածված սորտ և հայտնի է նաև Այրողան անունով։ Նա գտնվում է Մեղրու շրջանի այգիներում և իր քանակով (բացի Ալիդարա գյուղի այգիներից) երկրորդ տեղն է բռնում։ Հաստակոթի ուսումնասիրությունը կատարված է Մեղրու շրջանի Մեղրի գյուղի այգիներում։



Նկար 2. Հաստակոթ

Տերևը կլորավուն է, հնգաբլթակ, երբեմն եռբլթակներով, 18,1 (14,6—22,6) սմ երկարությամբ, 17,7 (14,6—21,0) սմ լայնությամբ, երեսի կողմից՝ լերկ. կանաչ, հարթ, տակի կողմից՝ թիթեղը և գլխավոր ջղերը ծածկված շատ նոսր ոստայնանման թավով։ Վերին կտրվածքները՝ խոր

կամ միջակ խորությամբ են, բացից մինչև փակ տատանվող ձևով, բացերը քնարաձև, սուր հատակով, փակերը նեղ, էլիպսաձև լուսանցքով։ Գլխավոր ջղերը երեսի կողմից ներկված են մուգ, տակի կողմից՝ համեմատաբար թույլ գինեկարմիր գույնով։ Տերևակոթը լերկ է, ներկված գինեկարմիր գույնով։

Ծ ա ղ ի կ ը ֆունկցիոնալ իգական է, վարսանդը տանձաձև, առէջքները 4—7 հատ, մեծ մասամբ 5, կորացած դեպի ցած։

Ո ղ կ ո ւ յ զ ը գլանա-կոնաձև է, երբեմն գլանաձև, հիմնականում խիտ, լավ փոշոտման դեպքում շատ խիտ, ազատ փոշոտման դեպքում՝ 13,1 (9,6—15,6) սմ երկարությամբ, 8,3 (6,3—12,5) սմ լայնությամբ, 147 (50—363) գր կշռով։ Լրացուցիչ փոշոտման դեպքում 13,7 (10—16,7) սմ երկարությամբ, 8,8 (5,4—12,0) սմ լայնությամբ, 223 (54—437) գր կշռով։

Պ տ ու ղ ն էլիպսաձև է, միջակ, 1,78 (1,35—2,1) սմ երկարությամբ, 1,56 (1,3—1,8) սմ լայնությամբ, 100 պտղի կշիռը՝ 279 գր, իսկ ծավալը 242 սմ$^3$։ Գույնը սև, պտղամիսը հյութալի, մաշկը համեմատաբար հաստ, ծածկված նոսր մոմաշերտով, պտղամսից անջատվող, հյութն անգույն։ Սերմերը՝ 1—4, հաճախ 2—3 հատ. 100 սերմի կշիռը՝ 3,69 գր։

## Ագրո-բիոլոգիական հատկությունները

Հաստակոթը միջահաս սորտ է. նրա հասունացման սկիզբը Մեղրու պայմաններում ընկնում է օգոստոսի սկզբին, լրիվ հասունացումը՝ օգոստոսի վերջին։

Աճեցողությունը փարթամ է։ Բերքատվությունը կախված է փոշոտման հաջողությունից. լավ փոշոտման դեպքում տալիս է միջակից բարձր բերք։ Ազատ փոշոտված՝ մեկ վազի բերքատվությունն ըստ 1947 թ. տվյալների տատանվում է 1,060 կգ-ից մինչև 4,322 կգ, միջինը՝ 2,196 կգ։ Լրացուցիչ փոշոտում ստացած մեկ վազի բերքատվությունը տատանվում է 1,031 կգ-ից մինչև 4,547 կգ, միջինը՝ 3,041 կգ։ Տնկարկի խտությունը՝ 1,0×1,0 մ։

Մեղրու շրջանում 1945 թվից մինչև 1947 թ. կատարված դիտողությունները ցույց են տալիս, որ Հաստակոթն ավելի մեծ չափով տուժում է միլդիուից, քան օիդիումից։

## Տնտեսական-տեխնոլոգիական հատկությունները

Խաղողի մեխանիկական կազմությունը բնորոշելու համար ստորև բերում ենք 1947 թ. կատարված 12 ազատ փոշոտված և 12 լրացուցիչ փոշոտում ստացած ողկույզների մեխանիկական անալիզի միջին տվյալները.

| | Ազատ փոշոտված | Լրացուցիչ փոշոտված |
|---|---|---|
| Ողկույզի կշիռը | 214,0 գր | 269,2 գր |
| Ողկույզի պտուղների թիվը | 77 հատ | 89 հատ |
| Ողկույզի պտուղների կշիռը | 208,35 գր | 261,96 գր |
| Մեկ պտղի կշիռը | 2,706 գր | 2,93 գր |
| Պտուղների ծավալը | 186,34 սմ$^3$ | 240 սմ$^3$ |
| Մեկ պտղի ծավալը | 2,42 սմ$^3$ | 2,69 սմ$^3$ |

| | Ազատ փոշոտված | Լրացուցիչ փոշոտված |
|---|---|---|
| Չանչի կշիռը . . . . . . . | 5,65 գր | 7,20 գր |
| Ողկույզի մաշկի կշիռը . . . | 8,5 գր | 10,18 գր |
| Ողկույզի սերմերի կշիռը . . | 5,69 գր | 7,54 գր |
| Հյութի և պտղամսի կշիռը . . | 194,16 գր | 241,24 գր |

Հյութի քիմիական կազմությունը 1947 թ. սեպտեմբերի 4-ին եղել է՝ ազատ փոշոտման դեպքում շաքարը՝ 20,1%, թթվայնությունը՝ 5,92‰, լրացուցիչ փոշոտման դեպքում շաքարը՝ 18,8%, թթվայնությունը՝ 6,25‰.

Հաստակոթը գինու սորտ է, բայց Մեղրու շրջանում տարածված գինու հիմնական սորտ հանդիսացող Արևիկի հետ համեմատած, տալիս է ցածր որակի գինի. այդ պատճառով հաստակոթը տեղում օգտագործում են գլխավորապես սեղանի սպիտակ գինուն գույն տալու համար։

## ՍԵՎ ԱՐԵՎԻԿ

Սև Արևիկը (Սև Ալագուրտ) Հայկական ՍՍՌ-ում համարվում է աբորիգեն սորտ. Մեղրու շրջանի այգիներում լինում է հատ ու կենտ վազերով։ Սև Արևիկի ուսումնասիրությունը կատարված է Մեղրու շրջանի Մեղրի գյուղի այգիներում։

Տերևը կլորավուն է, մեծ մասամբ եռաբլթակ, երբեմն ամբողջական կամ հնգաբլթակ, 16,6 (14,2—22,2) սմ երկարությամբ, 17,3 (15,2—22,1) սմ լայնությամբ, երեսի կողմից լերկ, մուգ կանաչ, հարթ, տակի կողմից լերկ, կանաչ։ Վերին կտրվածքները ծանծաղ են կամ բացակայում են. Հանդիպելու դեպքում միջակ խորությամբ, փակ, նեղ էլիպսաձև լուսանցքով, երբեմն առանց լուսանցքի։ Ներքին կտրվածքները մեծ մասամբ բացակայում են, առկայության դեպքում ծանծաղ են, բաց ճեղքաձև լուսանցքով։ Կոթունային կտրվածքը փակ է, ընդլայնական էլիպսաձև լուսանցքով, երբեմն բաց։ Տերևակոթը լերկ է, կանաչ կամ ներկված գինեկարմիր գույնով։

Ծաղիկը ֆունկցիոնալ իգական է, փոշանոթը սանձաձև, առէջքները 4—6 հատ, մեծ մասամբ 5, կորացած դեպի ցած։

Ողկույզը մեծ է, հիմնականում նոսր, 19,7 (14,8—27,7) սմ երկարությամբ 12,0 (8,5—15,6) սմ լայնությամբ, 419 (259—617) գր կշռով։

Պտուղը կլորավուն է, խոշոր, 1,98 (1,6—2,5) սմ երկարությամբ, 1,78 (1,4—2,2) սմ լայնությամբ։ 100 պտղի կշիռը 381 գր, իսկ ծավալը 341 սմ³։ Գույնը մուգ կարմիր է, պտղամիսը հյութալի, մսալի, բավականին քաղցր, մաշկը համեմատաբար հաստ, ծածկված թույլ մոմաշերտով, պտղամսից դժվար անջատվող, հյութն անգույն։ Սերմերը՝ 1—4, հաճախ 1—2։ 100 սերմի կշիռը 5,07 գր։

### Ագրո-բիոլոգիական հատկությունները

Սև Արևիկը միջահաս սորտ է. նրա հասունացման սկիզբը համընկնում է օգոստոսի սկզբին, լրիվ հասունացումը՝ օգոստոսի վերջին։ Աճեցողությունը բավականին ուժեղ է։

Մեղրու շրջանում կատարված երեք տարվա դիտողությունները ցույց են տալիս, որ Սև Արևիկն զգալի չափով տուժում է թե՛ միլդիուից և թե՛ օիդիումից։



Նկար 3. Սև Արենի

## Տնտեսական-տեխնոլոգիական հատկությունները

*Խաղողի մեխանիկական կազմությունը բնութագրելու համար ստորև բերում ենք 1947 թ. կատարված 10 ողկույզի մեխանիկական անալիզի միջին տվյալները.*

| | | |
|---|---|---|
| *Ողկույզի կշիռը* | *419* | գր |
| *Ողկույզի պտուղների թիվը* | *108* | հատ |
| *Ողկույզի պտուղների կշիռը* | *410,4* | գր |
| *Մեկ պտղի կշիռը* | *3,98* | գր |
| *Մեկ պտղի ծավալը* | *3,4* | սմ³ |
| *Ճանճի կշիռը* | *8,78* | գր |

Ողկույզի մաշկի կշիռը . . . . 12,8 գր
» սերմերի կշիռը . . . 9,6 գր
Հյութի և պտղամսի կշիռը . . 387,82 գր

Հյութի քիմիական կազմությունը 1947 թ. սեպտեմբերի 5-ին՝ շաքարը 19,9%, թթվայնությունը՝ 6,37‰։

Սև Արևիկը գործ է ածվում սեղանի գինի ստանալու համար։

## ՇԵԿ ՌԵՍՊԱՆ

Շեկ Ռեսպանն համարվում է Հայկական ՍՍՌ-ում աբորիգեն սորտ և տարածված է Մեղրու շրջանի այգիներում, իր քանակով երրորդ տեղն է բռնում։

Շեկ Ռեսպանի ուսումնասիրությունը կատարված է Մեղրու շրջանի Մեղրի գյուղի կոլտնտեսության 1-ին բրիգադայի այգիներում։



Նկար 4. Շեկ Ռեսպան

Տ ե ր և ը կլորավուն է, սրտաձև, հնգաբլթակ, 14,0 (12,8—19,5) սմ երկարությամբ, 15,8 (13,0—20,0) սմ լայնությամբ, երեսի կողմից լերկ, մուգ կանաչ, հարթ, թույլ փայլով, տակի կողմից լերկ, կանաչ։ Վերին կտրվածքները՝ միջակ խորությամբ կամ ծանծաղ, փակ, ճեղքանման կամ

նեղ էլիպսաձև լուսանցքով, երբեմն բաց, քնարաձև բացվածքով, սուր հատակով: Ներքին կտրվածքները՝ ծանծաղ, բաց, ճեղքանման կամ քնարաձև բացվածքով: Կոթունային կտրվածքը՝ տատանվող-բացից մինչև փակ, բացերը՝ քնարաձև, սուր հատակով, փակերը՝ էլիպսաձև լուսանցքով, երբեմն ատամնավոր: Տերևակոթը՝ լերկ բաց կանաչ, ներկված գինեկարմիր գույնով:

*Ծաղիկը* երկսեռ է, վարսանդը տանձաձև. առէջքները 4—6, հիմնականում՝ 5:

*Ողկույզը* կոնաձև է կամ գլանա-կոնաձև, մեծ մասամբ նոսր, 18,5 (11,7—22,7) սմ երկարությամբ, 10,4 (8,1—11,7) սմ լայնությամբ, 278 (184—390) գր կշռով, չանչը՝ դեղնավուն:

*Պտուղն* էլիպսաձև է, միջակ մեծությամբ, 1,7 (1,5—2,1) սմ երկարությամբ, 1,5 (1,25—1,75) սմ լայնությամբ: 100 պտղի կշիռը՝ 256 գր, իսկ ծավալը՝ 238 սմ³: Գույնը կարմիր է, պտղամիսը հյութալի, քաղցր, մաշկը միջակ հաստությամբ, ծածկված թույլ մոմաշերտով, պտղամսից հեշտ անջատվող, հյութն անգույն: Սերմերը 1—3 հատ, հաճախ 1—2: 100 սերմի կշիռը՝ 3,57 գր:

## Ագրո-բիոլոգիական հատկությունները

Շեկ Թեպուրին ավելի շուտ է հասունանում, քան միջահաս սորտերը: Հասունացման սկիզբը՝ հուլիսի սկզբներին, իսկ լրիվ հասունացումը՝ օգոստոսի առաջին կեսին: Աճեցողությունը միջակ է:

Մեղրու շրջանում կատարված երեք տարվա դիտողությունները ցույց են տալիս, որ Շեկ Թեպուրին ավելի շատ վարակվում է միլդիույով, քան օիդիումով:

## Տնտեսական-տեխնոլոգիական հատկությունները

Խաղողի մեխանիկական կազմությունը բնութագրելու համար ստորև բերում ենք 1947 թ. կատարված 10 ողկույզի մեխանիկական անալիզի միջին տվյալները.

| | | |
|---|---|---|
| Ողկույզի կշիռը . . . . . . . . | 370 | գր |
| Ողկույզի պտուղների թիվը | 106 | հատ |
| Ողկույզի պտուղների կշիռը . . | 273 | գր |
| Մեկ պտղի կշիռը . . . . . . | 2,57 | գր |
| Պտուղների ծավալը . . . . . | 252,2 | սմ³ |
| Մեկ պտղի ծավալը . . . . . | 2,38 | սմ³ |
| Չանչի կշիռը . . . . . . . . . | 6,0 | գր |
| Ողկույզի մաշկի կշիռը . . . . | 7,68 | գր |
| Ողկույզի սերմերի կշիռը . . . | 5,18 | գր |
| Հյութի և պտղամսի կշիռը . . | 260,16 | գր |

Հյութի քիմիական կազմությունը 1947 թ. սեպտեմբերի 6-ին եղել է՝ շաքար՝ 16,6%, թթվայնությունը՝ 5,85‰:

Շեկ Թեպուրին գործ է ածվում որպես սեղանի խաղող:

## ՍԵՎ ԻԾԱՊՏՈՒԿ

Սև Իծապտուկը համարվում է Հայկական ՍՍՌ-ում աբորիգեն սորտ և առանձին վայրերով գտնվում է Մեղրու շրջանի այգիներում: Շնորհիվ

պտուղների անբավարար երկարության Սև Իծապտուկ անունն այնքան էլ չի համապատասխանում այդ սորտին։

Սև Իծապտուկի ուսումնասիրությունը կատարված է Մեղրու շրջանի Մեղրի գյուղի 3-րդ բրիգադայի այգիներում։



Նկար 5. Սև Իծապտուկ

Տ ե ր և ը բաց գծավորի կլորավուն է, բաց ձևի՝ սրտաձև. Հնգաբլթակ 1,51 (1,21–1,92) սմ երկարությամբ, 1,57 (1,35—1,91) սմ լայնությամբ

երեսի կողմից լերկ, բաց կանաչ, հարթ, տակի կողմից գլխավոր ջղերի հիմքում խոզամազներ, բաց կանաչ։ Վերին կտրվածքները՝ տատանվող ծանծաղից մինչև միջակ խորությամբ, մեծ մասամբ միջակ խորությամբ. Պտղակոթնային փակ, համարյա առանց լուսանցքի կամ նեղ էլիպսաձև լուսանցքով, բացերը՝ քնարաձև, նեղ բացվածքով, սուր հատակով։ Ներքին կտրվածքները՝ ծանծաղ, փակ կամ բաց, բացերը՝ ճեղքանման բացվածքով, փակերն՝ առանց լուսանցքի։ Բլթակները՝ խոնարհված դեպի ներքև։ Տերևակոթը՝ լերկ, ներկված գինե-կարմիր գույնով։

Ծաղիկը երկսեռ է, վարսանդը երկարավուն շշաձև, առէջները 5—6։

Ողկույզը կոնաձև է, երբեմն նաև գլանակոնաձև, մեծ մասամբ նոսր, երբեմն խիտ, 22,2 (15,6—26,1) սմ երկարությամբ, 11,2 (9,5—14,6) սմ լայնությամբ, 310 (169,8—440,5) գր կշռով։

Պտուղը երկար է, խոշոր, 2,25 (1,65—2,75) սմ երկարությամբ, 1,57 (1,25—1,8) սմ լայնությամբ։ 100 պտղի կշիռը՝ 320 գր, իսկ ծավալը՝ 291 սմ³։ Գույնը սև է, պտղամիսը մսալի, հյութալի, քաղցր, մաշկը միջակ հաստությամբ, ծածկված հաստ մոմաշերտով, պտղամսից դժվար անջատվող, հյութն անգույն, սերմերը 1—4, հաճախ 1—2 հատ։ 100 սերմի կշիռը 3,66 գր։

## Ագրո-բիոլոգիական հատկությունները

Ծաղկման սկիզբը 1945 թվին նշվել է հունիսի 2-ին։

Սև Իծապտուկը միջահաս սորտ է. հասունացման սկիզբը՝ հուլիսի 2-րդ կեսին, իսկ լրիվ հասունացումը՝ օգոստոսի առաջին կեսին։ Աճեցողությունն ուժեղ է։

Սև Իծապտուկը բավականին ուժեղ վարակվում է միլդիույով և համեմատաբար թույլ՝ օիդիումով։

## Տնտեսական-տեխնոլոգիական հատկությունները

Խաղողի մեխանիկական կազմությունը բնութագրելու համար ստորև բերում ենք 1947 թվին կատարված 10 ողկույզի մեխանիկական անալիզի միջին տվյալները.

| | | |
|---|---|---|
| Ողկույզի կշիռը . . . . . . . . | 316,43 | գր |
| Ողկույզի պտուղների թիվը . . | 97 | հատ |
| Ողկույզի պտուղների կշիռը . | 310 | գր |
| Մեկ պտղի կշիռը . . . . . . . | 3,2 | գր |
| Պտուղների ծավալը . . . . . . | 284,3 | սմ³ |
| Մեկ պտղի ծավալը . . . . . . | 2,91 | սմ³ |
| Չանչի կշիռը . . . . . . . . . | 6,43 | գր |
| Ողկույզի մաշկի կշիռը . . . . | 10,81 | գր |
| Ողկույզի սերմերի կշիռը . . . | 6,79 | գր |
| Հյութի պտղամսի կշիռը . . . | 292,4 | գր |

Հյութի քիմիական կազմությունը 1947 թ. սեպտեմբերի 8-ին եղել է՝ շաքարը՝ 21,4%, թթվայնությունը՝ 5,24‰։

Սև Իծապտուկն օգտագործվում է որպես սեղանի խաղող։

## Ճ Ռ Ա Դ Ի

*Սինոնիմը — Թուրքի Կույրուղի**։*
*Ճռադին համարվում է Հայկական ՍՍՌ-ում աբորիգեն սորտ Մեղրու*



Նկար 6. Ճռադի

*շրջանում գտնվում է առանձին վազերով։ Ճռադի ուսումնասիրությունը կատարված է Մեղրու շրջանի Կուրիս գյուղի այգիներում։*

* Չխառնել Երևանի և Արտաշատի Թուրքի Կույրուղիի հետ, որը Ճիլարի սինոնիմն է։

*Տերևը կլորավուն է, հնգաբլթակի, երբեմն եռաբլթակներով, 20,4 (16,7–23,5) սմ երկարությամբ, 20,7 (17,0–25,5) սմ լայնությամբ, երեսի կողմից լերկ, մուգ կանաչ, հարթ, տակի կողմից կանաչ, լերկ, գլխավոր ջիղերը կոթունին միանալու կետում ծածկված են խոզամազերով։*

*Վերին կտրվածքները՝ միջին խորությամբ կամ ծանծաղ, հիմնականում փակ, էլիպսաձև լուսանցքով, երբեմն լուսանցքի հիմքում ատամնաձև հավելվածքով։ Կոթունային կտրվածքը՝ տատանվող բացից մինչև փակ, բայց հանդիպում են տերևներ, որոնց բլթակները ձագարաձև բարձրացած են վերև և կոթունային կտրվածքին տալիս են փակ տեսք։ Կոթունային կտրվածքը՝ էլիպսաձև, լայն հատակով։ Գլխավոր ջիղերն իրենց եզման կետում երեսի կողմից ներկված են գինե-կարմիր գույնով։*

*Ծաղիկը երկսեռ է, վարսանդը սափորաձև, առէջքները՝ 4—7, մեծ մասամբ 5 հատ։*

*Ողկույզը գլանաձև կամ գլանակոնաձև է, ծայրի մասում խիտ, կոթունի մոտ նոսր. լինում են նաև բոլորովին խիտ ողկույզներ 35,0 (20,2–43,5) սմ երկարությամբ, 12,0 (10,4–14,2) սմ լայնությամբ, 667 (331—894) գր կշռով։*

*Պտուղը կլորավուն է, միջակ մեծությամբ, 1,75 (1,40—2,05) սմ երկարությամբ, 1,76 (1,40—2,10) սմ լայնությամբ. 100 պտղի կշիռը՝ 336 գր. ծավալը՝ 310 սմ³։ Գույնը սև, պտղամիսը հյութալի, հալչող, թույլ քաղցրությամբ, մաշկը միջակ հաստությամբ, ծածկված նոսր մոմաշերտով, պտղամսից համեմատաբար դժվար անջատվող, հյութն՝ անգույն։ Սերմերը՝ 1–4, հաճախ 1—2 հատ. 100 սերմերի կշիռը՝ 3,95 գր։*

## Ագրո-բիոլոգիական հատկությունները

*1945 թվին ծաղկման սկիզբը նշված է հունիսի 6-ին։*

*Ճռաղին ուշահաս սորտ է. Նրա հասունացման սկիզբը Մեղրու պայմաններում ընկնում է օգոստոսի վերջերին, իսկ լրիվ հասունացումը՝ սեպտեմբերի 2-րդ կեսին։ Աճեցողությունը բավականին ուժեղ է։ Չնայած Ճռաղի ողկույզների մեծությանը, բերքատվությունը միջակից չի անցնում. Նրան կարելի է օգտագործել որպես ելանյութ՝ բերքատու սորտերի հետ խաչաձևելու միջոցով բարձր բերքատու սորտեր ստանալու համար։*

*Ըստ մեր դիտողությունների Ճռաղին համեմատաբար ավելի շատ է տուժում օիդիումից, քան միլդիուից. զգալի չափով տուժում է նաև ողկուզակերից։*

## Տնտեսական-տեխնոլոգիական հատկությունները

*Խաղողի մեխանիկական կազմությունը բնութագրելու համար ստորև բերում ենք 1947 թ. կատարված 10 ողկույզի մեխանիկական անալիզի միջին տվյալները.*

| | | |
|---|---|---|
| *Ողկույզի կշիռը* . . . . . . . . | 666.9 | գր |
| *Ողկույզի պտուղների թիվը* . . | 193 | հատ |
| *Ողկույզի պտուղների կշիռը* . . | 649,7 | գր |
| *Մեկ պտղի կշիռը* . . . . . . . | 3,36 | գր |
| *Պտուղների ծավալը* . . . . . | 508,3 | սմ³ |

| | | |
|---|---|---|
| *Մեկ պտղի ծավալը . . . . . .* | *3,1* | սմ³ |
| *Զանգի կշիռը . . . . . . . . .* | *19,3* | գր |
| *Ողկույզի մաշկի կշիռը . . . .* | *19,5* | գր |
| *Ողկույզի սերմերի կշիռը . . .* | *13,41* | գր |
| *Հյութի և պտղամսի կշիռը . .* | *614,69* | գր |

*Հյութի քիմիական կազմությունը 1947 թվի սեպտեմբերի 7-ին եղել է՝ շաքար՝ 15,8%, թթվայնությունը՝ 8,4‰։*

*Խաղողին խառնում են Մեղրու տանձգարա սորտ հանդիպագող Արևիկի հետ և գործ են ածում սեղանի գինի ստանալու համար։*

Р. А. Ергесян

## Основные сорта винограда Мегринского района Армянской ССР

### Резюме

Из описанных в статье 6 сортов винограда Мегринского района пять описываются впервые, причем три (Сев Аревик, Шек репсе и Сев ицаптук) не указаны в „Списке сортов винограда, находящихся в Армянской ССР“, приведенном в „Ампелография Армянской ССР“, изданной в 1947 г. в Ереване. Вошедшее в названную Ампелографию описание сорта „Аревик“ в настоящей работе дополнено на основании последующих исследований, произведенных автором.

В начале статьи дана краткая характеристика среды произрастания названных сортов.

*Аревик* (Алагура). Является основным сортом Мегринского района, занимая 95—98% всей площади садов, за исключением сел. Алидара, где он составляет всего около 75%.

Листья голые. Цветки функционально женские. Гроздь в основании рыхлая, при благоприятном опылении плотная, широко коническая, средней величины. Ягода округлая, крупная, в тени желтовато-зеленая, на солнце ярко зеленовато-желтая; мякоть сочная, мясистая, приторно сладкая. Кожица толстая, грубая, покрытая тонким восковым налетом, легко отделяющаяся от мякоти; сок бесцветный.

Начало цветения—в конце мая и в начале июня; начало созревания—в первой половине августа; полное созревание—в первой половине сентября.

Рост сильный; урожайность высокая при благоприятном опылении. Болезнеустойчивость слабая; сильно поражается как мильдью, так и оидиумом.

Используется для приготовления в основном крепких столовых и сладких вин, частично—изюма.

*Астакот* (Айбоган). Считается аборигенным сортом Армянской ССР. В Мегринском районе, за исключением сел. Алидара, занимает второе место.

Листья на верхней поверхности голые, на нижней поверхности пластинка и основные жилки покрыты редким паутинистым опушением. Цветки функционально женские. Гроздь в основном плотная, при благоприятном опылении очень плотная, цилиндро-коническая, иногда цилиндрическая. Ягода—средней величины, эллиптическая, черная; мякоть сочная, кожица сравнительно толстая, покрытая тонким восковым налетом, отделяющаяся от мякоти; сок бесцветный. Начало созревания—в начале августа, полное созревание—в конце августа. Рост сильный; урожайность—при благоприятном опылении—выше среднего. Поражается как мильдью, так и оидиумом, по первым сильнее.

Используется в качестве винного сорта, преимущественно для окрашивания сока сорта „Аревик".

*Черный Аревик* (Черн. Алагура). Считается аборигенным сортом Армянской ССР. В виноградниках Мегринского района находится отдельными кустами.

Листья голые. Цветки функционально женские. Гроздь рыхлая, без определенной формы. Ягода округлая, крупная, темнокрасная, мякоть мясисто-сочная, довольно сладкая; кожица сравнительно толстая, покрытая тонким восковым налетом, трудно отделяющаяся от мякоти; сок бесцветный. Начало созревания в начале августа, полное созревание в конце августа. Рост довольно сильный. Сильно поражается мильдью и оидиумом.

Используется для приготовления столового вина.

*Шек репсе.* Считается аборигенным сортом Армянской ССР. В Мегринском районе занимает третье место среди распространенных там сортов.

Листья голые. Цветки обоеполые. Гроздь преимущественно рыхлая, коническая или цилиндро-коническая. Ягода эллиптическая, средней величины, красная; мякоть сочная, сладкая; кожица средней толщины, покрытая тонким восковым налетом, легко отделяющаяся от мякоти; сок бесцветный. Начало созревания—в начале июля, полное созревание—в первой половине августа. Рост средний. Больше поражается мильдью, чем оидиумом.

Используется как столовый сорт.

*Сев ицаптук.* Считается аборигенным сортом Армянской ССР. В виноградниках Мегринского района находится отдельными кустами.

Листья голые, на нижней стороне у основания жилок щетинистые волоски. Цветки обоеполые. Гроздь преимущественно рыхлая, иногда плотная, коническая, иногда цилиндро-коническая. Ягода длинная, крупная, черная; мякоть мясисто-сочная, сладкая; кожица средней толщины, покрытая толстым восковым налетом, трудно отделяющаяся от мякоти. Сок бесцветный. Начало цветения в 1945 г. отмечено 2-го июня. Начало созревания—во второй половине июля, полное созревание—в первой половине августа. Рост сильный. Сильно поражается мильдью, слабо—оидиумом.

Используется в качестве столового сорта.

*Тжраки* (Турки-куйруги*). Считается аборигенным сортом Армянской ССР. В виноградниках Мегринского района находится отдельными кустами.

Листья голые, с покрытыми у основания щетинистыми волосками жилками. Цветки обоеполые. Гроздь у вершины плотная, у основания рыхлая, иногда вся плотная, цилиндрическая или цилиндроконическая, очень длинная. Ягода округлая, средней величины, черная; мякоть сочная, не очень сладкая; кожица средней толщины, покрытая тонким восковым налетом, сравнительно трудно отделяющаяся от мякоти; сок бесцветный. Начало цветения в 1945 году отмечено 6-го июня; начало созревания в конце августа, полное созревание —во второй половине сентября.

Рост довольно сильный. Урожайность, несмотря на величину гроздей, средняя. Сравнительно больше поражается оидиумом и гроздевой листоверткой.

Используется в качестве винного сорта в смеси с основным сортом Мегринского района—„Аревик". Можно использовать в качестве исходного материала в смеси с урожайными сортами для получения высокоурожайных гибридов.

* Не надо смешивать с Ереванским и Арташатским Турки-куйруги (лисий хвост), являющимся синонимом сорта Чилар.